ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 11/2022-4
(Բացառությամբ շինարարական կապալի)

« 7 » նոյեմբերի 2022 թ.

ք. Իջևան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ-ն հետագայում կապալառու ի դեմս տնօրեն Վ.Այդինյանի, որը գործում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 03/01/2022թ. N-01-33/01 լիազորագրի հիման վրա, մի կողմից և «Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժին Տավուշի տարածաշրջանի բաժանմունք ի դեմս բաժանմունքի պետ արդարադատության փոխգնդապետ Արտակ Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը, այսուհետ Պայմանագիր, հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրի համաձայն, Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով կատարել Տավուշի մարզի Իջևան քաղաք փ. Երիտասարդական 1 հասցեի հասարակական շենքի գազիֆիկացման շին մոնտաժային աշխատանք, այսուհետ՝ Աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2. Աշխատանքը կամ դրա մասը համարվում է կատարված Պատվիրատուի լիազոր ներկայացուցչի կողմից համապատասխան հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. Աշխատանքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուից պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել դրանք և հատուցել Պատվիրատուին դրանում հասցված վնասները,

2.1.3. Աշխատանքն ընդունելուց հետո՝ 1 (մեկ) ամսվա ընթացքում Պատվիրատուի գույքին վնաս պատճառելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները և հատուցելու վնասները կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը և դրանց հետևանքով պատճառված վնասները:

2.1.4. մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց Կապալառուին վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց Պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած Աշխատանքին համարժեք գին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Պայմանավորված գինը Կապալառուին վճարել նախօրոք՝ մինչև աշխատանքը սկսելը:

2.2.2. Աշխատանքում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Կապալառուին:

2.3. Կապալառուն պարտավոր է՝

2.3.1. Աշխատանքը կատարել Պայմանագրի 4.1. կետով սահմանված ժամկետներում,

2.3.2. Աշխատանքը կատարել առաջադրանքին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին և Պայմանագրին համապատասխան, պատշաճ որակով, իր ուժերով, նյութերով, սարքերով, բացառությամբ այն դեպքերի, երբ նյութերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից,

2.3.3. Աշխատանքը հանձնելուց հետո, երաշխիքային ժամկետում՝ մեկ ամսվա ընթացքում, Պատվիրատուի պահանջով 10-օրյա ժամկետում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները,

2.3.4. Աշխատանքի արդյունքը հանձնելու հետ մեկտեղ Պատվիրատուին տեղեկություն հաղորդել Պայմանագրի առարկայի շահագործման կամ այլ օգտագործման վերաբերյալ, եթե տեղեկատվության բնույթը այնպիսին է, որ առանց դրա անհնար է Աշխատանքի արդյունքն օգտագործել Պայմանագրում նշված նպատակների համար:

2.4. Կապալառուն իրավունք ունի՝

2.4.1.Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված իր պարտականությունները չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքը կատարելուց,

2.4.2. Պատվիրատուի համաձայնությամբ Աշխատանքը ավարտել Պայմանագրով սահմանված ժամկետին:

3. Աշխատանքի գինը և վարձատրության կարգը

3.1. Պայմանագրով կատարման ենթակա Աշխատանքի գինը սահմանվում է 857849 (ութ հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

3.2. Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումները կատարում է անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ:

3.3. Պատվիրատուն փաստացի կատարված Աշխատանքների համար Կապալառուին վճարում է մինչև հանձնման-ընդունման ակտը ստորագրելը անկանխիկ ձևով՝ բանկային փոխանցմամբ:

4. Աշխատանքը կատարելու ժամկետները

4.1. Աշխատանքը կատարելու սկզբնական ժամկետն է 7 նոյեմբերի 2022թ., իսկ վերջնական ժամկետը 7 դեկտեմբերի 2022թ.:

Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքը կատարելու ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական ժամկետները խախտելու համար:

4.2. Պայմանագրի 4.1. կետում նշված Աշխատանքը կատարելու սկզբնական և վերջնական ժամկետները կարող են փոփոխվել Պայմանագրում նախատեսված դեպքերում ու կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Աշխատանքի կատարման ժամկետի(ների) խախտման համար Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կապալառուից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքի գնի 0.1%-ի չափով:

5.2. Պատվիրատուի կողմից պայմանավորված գինը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Կապալառուն իրավունք ունի պահանջել Պատվիրատուից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքի գնի 0.1%-ի չափով:

5.3. Պայմանագրով իրենց պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Վեճերի լուծման կարգը

6.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

6.2. Պայմանագրի 6.1. կետի պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը վեճերը լուծելու դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և դադարում է պարտականությունների պատշաճ կատարմամբ:

7.2. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարար՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տավուշի ԳԳՄ

Իրավաբանական հասցե. ք.Երևան Թբիլիսյան խճ 43
Գտնվելու հասցե ք. Իջևան փ.Մեհրաբյան 53

Հ/Հ 2476100027160000
«Արդշինբանկ» ՓԲԸ, « Իջևանի » մ/ճ

ՀՎՀՀ 00046317

Տնօրեն Վ.Այդինյան

Պատվիրատու՝

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժին
Տավուշի տարածաշրջանի բաժանմունք

Գտնվելու հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ Իջևան քաղաք Վ Երիտասարդական 1
Իրավաբանական հասցե. ք. Երևան փ. Հալաբյան 41 Աջափնյակ
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338
Հեռ. +(374)-93-08-07-04

Բաժանմունքի պետ՝ Ա. Մարգարյան

Պատվիրատու՝
Կապալառու՝

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն»
Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժին
« Գազպրոմ Արմենիա » ՓԲԸ

Օբյեկտի հասցե՝ փ. Երիտասարդական 1
Նախահաշվային արժեքը՝ 857849 դրամ

07.11.2022 թ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

h/h	Հիմնավորումը	Աշխատանքների և օգտագործվող նյութերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը, /դրամ/						Ամբողջ նյութերի արժեքը	Գնացուցակի ընդհանուր արժեքը	Ընդամենը, դրամ
					Աշխատավարձը, դրամ	Աշխատավարձի ընդհանուր արժեքը, դրամ	Մեքենա-մեխանիզմ շահագործում, դրամ	Մեքենա-մեխանիզմ շահագործում, ընդամենը, դրամ	Նյութերի միավորի արժեքը	Նյութերի ընդհանուր արժեքը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	1-962	Հենասյունների բների փորում IV կարգի գրունտում , ձեռքով	խոր մ	0.5	3620	1810	0	0	0	0	0	3620	1810
3	22-86	Միաձույլ բետոնե հիմքերի պատրաստում B 12,5 բետոնից	խոր մ	0.5	6528	3264	1004.6	502	36500	36500	18250	44033	22016
4	9-153	Հենարանների պատրաստում պողպատե d=57 մմ խողովակից	գծ/ մ	18	1600	28800	98	1764	2800	3200	57600	4898	88164
6	16-50	Պողպատե ջրագազային խողովակների տեղադրում d=25*2,8 մմ	գծ.մ	36	650	23400	59.1	2128	1100	1500	54000	2209	79528
7	16-51	Պողպատե ջրագազային խողովակների տեղադրում պատերին ամրացումով d=32*2,8 մմ	գծ.մ	83	650	53950	59.1	4905	1500	2000	166000	2709	224855
11		S-20 մմ խցանային փականի տեղադրում	հատ	1	1326	1326	132.5	133	2500	2500	2500	3959	3959
21		Գազասարքերի միացում գազատարին	հատ	1	1944	1944	384.1	384	2300	2300	2300	4628	4628
11		Գազատարի և հենարանների յուղաներկում 2 անգամ	քառ, մ	8.78	499.51	4386	1.1	10	1399.42	1399.42	12288	1900	16683
12		Ջեռուցման կաթսայի թողարկում	հատ	1	1800	1800	400	400	1000	1000	1000	3200	3200
13		Գազատարի փորձարկում	գծ.մ	119	449.3	53467	0	0	150	150	17850	599	71317
50		Պողպատե խողովակների ներմիացում գործող գազատարին	հատ	1	4500	4500	120	120	2450	2450	2450	7070	7070
15		վթարային կափույրի և Ազգանշ սարքի տեղադրում 20 մմ	հատ	1	3000	3000	200	200	30000	35000	35000	38200	38200
16		Գազի հաշվիչի տեղադրում G -6	հատ	1	3000	3000	1000	1000	3000	3000	3000	7000	7000
		Ընդամենը				**184647**		**11545**			**372238**		**568430**
		Վերադիր ծախսեր 13.3%											**568430**
		Ընդամենը											**75601**
		Շահույթ 11%											**644031**
		Ընդամենը											**70843**
		ԱԱՀ 20 %											**714874**
		Ընդամենը											**142975**
													857849

Պատվիրատու «Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն»
Գեղարքունիքի և Տավուշի մարզային բաժին
Տավուշի տարածաշրջանի բաժանմունք

Բաժանմունքի պետ Ա. Մարգարյան

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան փ. Հալաբյան 41 Ա Աջափնյակ
Գործ. հասցե՝ ք. Իջևան փ. Երիտասարդական 1
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

« 07 » հոկտեմբեր 2022 թ.

«Գազպրոմ Արմենիա » ՓԲԸ Տավուշի ԳԳՄ
Տնօրեն Ս. Սարգսյան

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան Թբիլիսյան խճ 43
Գործ. հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան փ. Մեհրաբյան 53
Հ/Հ 247610002716000 « ԱՄԿ » ՓԲԸ Իջևանի մ/ճ
ՀՎՀՀ 00046317

« 07 » հոկտեմբեր 2022 թ.